ԳԵՂԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՄԵՐԻԿՅԱՆ «ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒՄ (1903-1907 ԹԹ.)

Բանալի բառեր *– «Երիտասարդ Հայաստան», Եվրոպա, Ռուսաստան, Թուրքիա, արևմտահայություն, ազատագրական պայքար, Հայկական հարց, կուսակցություն*

XIX դարի վերջին և XX դարի սկզբին հայ ժողովրդի գերխնդիրը թուրքական տիրապետությունից ազատագրվել էր: 1890-ական թթ. Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած հայկական զանգվածային կոտորածները, եվրոպական դիվանագիտության կողմից Հայկական հարցի շահարկումները և ազատագրական պայքարում արևմտահայերի կրած անհաջողությունները շարժման ղեկավարությունը ստանձնած հայ ազգային կուսակցություններին ստիպեցին վերանայելու իրենց որդեգրած մարտավարությունը: Պայքարի նոր և արդյունավետ ուղիների փնտրտուքը դարձել էր հրատապ և անհետաձգելի: Այս խնդրով առավել քան մտահոգված էր հնչակյան կուսակցությունը, որի գործունեության սկզբնական շրջանի որոշակի հաջողություններին հետևեցին ներկուսակցական սուր վեճերն ու պառակտումները:

Հայ ժողովրդի ազատագրական պայքարի նախորդ շրջանի վերլուծությունը և պայքարի նոր ուղիների ու միջոցների որոնումները լայնորեն քննարկվում էին Հնչակյան կուսակցության Ամերիկայի շրջանի օրգան «Երիտասարդ Հայաստանի» էջերում: Որպես շաբաթաթերթ այն սկսեց հրատարակվել 1903 թ. Բոստոնում, իսկ 1906-1907 թթ.՝ Նյու-Յորքում: 1916 թ. հետո պարբերականը վերածվել է թերթի և հրատարակվել Պրովիդենսում, այնուհետև՝ Չիկագոյում (1917-1923), Բոստոնում (1923-1927), իսկ հետագայում՝ Նյու-Յորքում (1927-1973): Մեր կողմից քննարկվող ժամանակաշրջանում՝ 1903-1907 թթ., պարբերականի գլխավոր խմբագիրը հնչակյան կուսակցության հայտնի գործիչ, տեսաբան Ստեփան Սապահ-Գյուլյանն էր: Հայ ազգային-քաղաքական կյանքին վերաբերող հոդվածներով հանդես էին գալիս կուսակցության գործիչներ Վարազդատը, Ասոն, Ս. Հովյանը և այլք:

«Երիտասարդ Հայաստանի» առաջին համարի խմբագրական հոդվածում, որը ևս վերնագրված է «Երիտասարդ Հայաստան», պարզաբանվում է պարբերականի հրատարակության նպատակը, ըստ որի՝ յուրաքանչյուր ժողովրդի ազատության անքակտելի իրավունքն է «սրբագործել եւ ճանաչել եվրոպական քաղաքակրթութիւնը, մարդկային առաջադիմութիւնը, ժամա-

նակակից գիտութիւնը», հետևաբար՝ հայ ժողովուրդը նույնպես «կատարեալ իրավունք ունի ազատ լինել, իր անկախ հայրենիքը ունենալ»[1]:

Սա է պարբերականի «անմիջական և մոտակայ» նպատակը: Այնուհետև առաջ է քաշվում «Երիտասարդ Հայաստանի» հեռավոր նպատակը՝ «սոցիալիստական սկզբունքների իրականացումը հայ կեանքի մէջ», իսկ այս նպատակներին հասնելու «միակ միջոցը» համարվում է հեղափոխությունը (նույն տեղում): Ակնհայտ է, որ խմբագրական հոդվածում պարբերականի մոտակա և հեռավոր նպատակները նույնանում են հնչակյան կուսակցության ծրագրային դրույթների հետ: Այլ կերպ լինել չէր կարող, քանի որ «Երիտասարդ Հայաստանը» այդ կուսակցության պաշտոնական օրգանն էր:

«Երիտասարդ Հայաստանի» 1903-1907 թթ. համարները լի են Արևմտյան Հայաստանի բազմաթիվ վայրերում թուրքական իշխանությունների և քուրդ աղաների հալածանքների, կեղեքումների ու բռնությունների նկարագրություններով, որոնք տպագրվում են պարբերականի «Նամականի» բաժնում:

«Եվրոպան և հայերը» հոդվածում Սապահ-Գյուլյանը նկարագրում է արևմտահայերի ծանր կացությունը: Վանում, Մուշում, Սասունում և այլուր տեղի ունեցող կոտորածների, թալանի, բռնությունների վերաբերյալ նա գրում է, որ այդ սրտառուչ իրադարձությունները հայ գործիչները բազմիցս ներկայացրել են ցարերին, եվրոպական բարձրաստիճան պաշտոնյաներին և այլ ազդեցիկ գործիչների: Այդ խնդրագրերում հստակ սահմանված է հայերի մարդկային ու բնական պահանջը, այն է՝ «ապրիլ իրենց տան ու տեղի մէջ, խաղաղ կեանք վարել, աշխատել, քրտինք թափել, վաստակել ու դրանից առատ բաժին հանել իրենց տերերին, իրենց կառավարիչներին, միայն թէ թոյլ տրուեր, որ իրենք ապրէին եւ աշխատէին» (1903, թիվ 2): Հոդվածի հեղինակը գրում է, որ «աղերսարկու, դիվանագէտ հայ հայրենասերները իրենց խնդրածի չափավորութիւնը, օրինաչափութիւնը» հիմնավորում են պատմական և բազմաթիվ այլ պատճառներով: Օրինակ, որ հայերը քրիստոնյա են, ուստի «քրիստոնեայ աշխարհի պարտականութիւնն է օգնութեան հասնիլ, թէ հայերը հին, կուլտուրական ազգ են, ունին որոշ քաղաքակրթութիւն, ընդունակ վաճառական, գեղարուեստական եւ գիտական բոլոր ճիւղերի մէջ, իսկ այդ բոլոր առաւելութեանց հանդէպ՝ իր թշնամին միայն սպառող բարբարոս, հակառակ եվրոպական քաղաքակրթութեան, ծոյլ, անընդունակ յառաջադիմութեան» (նույն տեղում): Այնուհետև հոդվածագիրը նշում է, որ եվրոպացի պետական այրերը կարեկցում են, հայ հարուստը «իր բաժին լուման է բերում խեղճերին կարեկցութիւնից մղուած», և դրանով համարում են իրենց պարտականությունը կատարած, սակայն գործնական քայլեր չեն անում, և «եվրոպական անտարբեր ժայռը այսպես տեղից չէ

[1] «Երիտասարդ Հայաստան», 1903, թիվ 1 (այսուհետ շարադրանքում՝ տարին և թվականը):

շարժվում և աղերսող հային օգնութեան չի հասնում» (նույն տեղում):

Ինչ վերաբերվում է եվրոպական դռները թակողներին, ապա, ինչպես գրում է Սապահ-Գյուլյանը, այս դեպքում նրանք սկսում են այս կամ այն պետական անձանց մեղադրել «բավականաչափ քրիստոնեա» չլինելու կամ «շահադիտական միտումների» մեջ և այլն: «Եւ այսպես տարիներ գալիս են գնում, իսկ հայի արիւնը, անպատիժ հոսում է անտարբեր Եվրոպայի աչքի առաջ»,– նշում է այդ հոդվածում (նույն տեղում): Սապահ-Գյուլյանի հետևությունն իրատեսական է. «Ազգերի քաղաքականութիւնը չի ղեկավարւում զգացմունքով, այլ միշտ նկատողութեան ունի իր շահը, սեփական գոյութիւնը»: Հետևաբար, ոչ մի ազգ, ոչ մի պետություն իր հազարավոր զավակների արյունը երբեք չի հոսեցնի մեկ ուրիշ՝ լինի խեղճ, թշվառ թե իրավազուրկ, ազգի քաղաքական ազատության համար (նույն տեղում): Այնուհետև պատմության օրինակներով ամրապնդվում է այս տեսակետը:

«Արտաքին միջամտություն» խմբագրական հոդվածում քննական վերլուծության է ենթարկվում այն խնդիրը, թե ինչու Բեռլինի պայմանագիրը ստորագրած եվրոպական պետությունները չեն միջամտում «Թրքահայկական դատին» և հավատակից հայ ժողովրդին չեն ազատագրում թրքական տիրապետությունից: Սապահ-Գյուլյանը միամտություն է համարում հայկական միջավայրում շրջանառվող այն տեսակետը, թե Եվրոպան չի միջամտում, որովհետև «մենք պէտք եղածին պէս չկարողացանք վեց մեծ Պետությունների ներկայացուցիչներին հասկացնել, թէ իրենք ի՞նչ մեծամեծ շահեր պիտի ունենային, եթէ միջամտեին և հայերին ազատէին» (1906, թիվ 32): Նա հեգնում է այս տեսակետը պաշտպանողներին՝ գրելով. «Երևում էր, որ պետությունները իրենց շահերը չգիտէին և հայ դիւանագետներն էին, որ նրանց իրենց շահերը պիտի հասկցնէին» (նույն տեղում): Հոդվածի հեղինակը արտաքին միջամտության գլխավոր նախապայման է համարում հայկական ուժերի ներքին համախմբումը և գտնում, որ եվրոպական միջամտությունը պահանջելուց առաջ հայ ժողովուրդը պետք է նախ իր պարտականությունը կատարի դեպի իր Դատը (նույն տեղում):

Վերլուծելով Բեռլինի վեհաժողովից մինչև 1899 թ. Հաագայի Խաղաղության վեհաժողովը հայկական պատվիրակությունների գործունեության արդյունքները՝ Վարազդատը հանգում է այն հետևությանը, որ կաթողիկոսական կոնդակներով ու տերություններից ողորմություն մուրալով հայ ժողովուրդը երբեք հաջողության չի հասել: «Մինչև ե՞րբ» առաջնորդող հոդվածում նա ցույց է տալիս «մարդասեր Եվրոպային» օգնության դիմելու միջոցի անօգուտ լինելը, որի համար ամբողջ հայությունը «ըստ Պիզմարքեան բացատրութեան, կուտի չափ արժեք չունի» (1907, թիվ 16): Շարունակելով այս միտքը՝ Վարազդատը գրում է. «Մինչև ե՞րբ պիտի աղերսենք այլասեռուած Եւրոպային, որու ականջին խոսողները, ոչ թե մարդկային տառապանքներն են... այլ իւր քաղաքական շահերը» (նույն տեղում): Հոդվածագիրը, հայկական խնդրին համակիր եվրոպական ազդեցիկ քաղաքական գործիչներին

վկայակոչելով, գրում է, որ ստեղծված իրավիճակում իրենք են հուշել հայության ներկայացուցիչներին գործունեության ճիշտ ուղին, ըստ որի՝ «Հայկական խնդրի լուծումը պետք է սպասել հայ հեղափոխութենէն» (նույն տեղում): Այնուհետև Վարազդատը եզրակացնում է, որ այս ճշմարտությունը որպես ուղենիշ ունենալով՝ «իւրաքանչիւր ճշմարիտ հայ պարտվաւոր է ձեռք ձեռքի տուած նետուիլ պարտականութեան դաշտին վրայ և իւր նիւթական, բարոյական ու ֆիզիքական զոհողութիւններով իրականացնել Անկախ հայրենիք մը ունենալու այն գերագոյն բաղձանքը, որուն կը ձգտի հայութիւնը դարերէ ի վեր» (նույն տեղում):

«Մեծ պետութիւնների համախմբումը» հոդվածում քննարկվում է եվրոպական մեծ պետությունների քաղաքականությունը Արևելյան հարցում, ցույց է տրվում, որ այստեղ նկատելիորեն համընկնում են Ռուսաստանի, Ֆրանսիայի, Իտալիայի շահերը: Ինչ վերաբերում է Անգլիային, ապա նա «իր հաստատուն քաղաքական ուղղութիւնը ունի», գրում է Սապահ-Գյուլյանը, «քաղաքական ինչպիսի բաղկացութիւններ էլ որ տեղի ունենան, նա Թիւրքիայի կողմը չի բռնիլ, նրա պաշտպանութեան, նրա փրկութեան համար զէնք չի բարձրացնիլ» (1903, թիվ 4): Նա գտնում է, որ դրանով է պայմանավորված Թուրքիայի հարցում status quo-ն պահպանելու Ռուսաստանի քաղաքականությունը: Ընդգծվում է, որ Արևելքի հարցում Ռուսաստանի նպատակն է Թուրքիայից անջատել և ստեղծել սլավոնական փոքր պետություններ և նրանց միջոցով ազդել Թուրքիայի և Ավստրո-Հունգարիայի վրա: Սրա հետ մեկտեղ՝ շեշտվում է, որ Ռուսաստանը դրան ձգտում է ոչ թե մարդասիրական գաղափարներից դրդված, այլ ելնելով միայն իր պետական շահերից (նույն տեղում):

«Արեւելեան խնդրի շուրջը» հոդվածում քննադատության է ենթարկվում Ֆրանսիայի վարած քաղաքականությանը Հայկական հարցում, որի «կաշառուած մամուլը, միացած փոքրոգի Հանօտօի հետ», թույլ չտվեց ֆրանսիական հասարակությանը տեղեկանալու Օսմանյան կայսրությունում 1890-ական թթ. տեղի ունեցած հայկական զանգվածային կոտորածների մասին (1905, թիվ 5):

«Եփրատի հովտում» հոդվածում Սապահ-Գյուլյանը լուսաբանում է Գերմանիայի արևելյան քաղաքականությունը, ցույց տալիս, որ գերմանական միավորված պետության ստեղծումից հետո այն ձգտում էր ծավալվել դեպի Փոքր Ասիա, Սիրիա և Միջերկրական ծով: Հեղինակը դատապարտում է Գերմանիայի արևելյան քաղաքականությունը այն բանի համար, որ նա հենվում էր «թուրք տարրի վրան՝ ընդդէմ քրիստոնէից» և իր «հեռաւոր շահերը ապահովելու համար, միւսուլմանների վրա կրթնած Գերմանիան» բոլորովին ուշադրություն չէր դարձնում այն հանգամանքին, որ այդ նույն մուսուլման տարրը, օգտվելով Գերմանիայի հովանավորությունից, ավելի մեծ ուժով «պիտի ջաղջախէր» իր տիրապետության տակ գտնվող ժողովուրդներին (1903, թիվ 6):

«Երիտասարդ Հայաստանը» առանձնահատուկ ուշադրություն է դարձնում հայ քաղաքական կյանքում Ռուսաստանի դերի հարցին: XX դարի սկզբին Ռուսաստանի քաղաքականությունը ընդգծված հակահայկական էր: 1903 թ. հունիսի 12-ի հայ եկեղեցու գույքի բռնագրավման մասին ցարի հրամանագիրը, 1905-1906 թթ. հայ-թաթարական կոտորածները ընդվզման մեծ ալիք էին առաջացրել ամբողջ հայության շրջանում: Պարբերականի 1903 թ. համարների՝ «Նամակ Կովկասից» բաժնում բազմաթիվ են ռուսական իշխանությունների և առանձին պաշտոնյաների հակահայկական գործողությունների վերաբերյալ հաղորդումները (1903, թիվ 21-24):

«Ռուսաստանի կառաւարութիւնը հայ ժողովրդի հանդէպ որդեգրել է ազգային ինքնուրոյնութեան եւ ազգային անհատականութեան ոչնչացման ուղղութիւն»,– գրում է Սապահ-Գյուլյանը: Նա ցույց է տալիս, որ հայկական դպրոցների փակումը, հայ գյուղացիներին հող չտալը, ռուսաց լեզվով երդվելու խնդիրը և եկեղեցական կալվածքների բռնագրավումը այդ քաղաքականության ընդգծված արտահայտություններն էին (1903, թիվ 20):

«Նամակ Կարսից» հաղորդման մեջ Հմայակ Դիմաքսյանը Կարսի մարզի նահանգապետ Տոմիչի, ոստիկանապետ Սամոյլովի, Կարսի կառավարիչ Խերխեուլիձեի ձեռնարկած քայլերի միջոցով ցույց է տալիս ռուսական իշխանությունների վարած հակահայկական քաղաքականությունը: Հեղինակը նշում է մի կարևոր հանգամանք, որ Կարսի մարզի թուրք հյուպատոսը տարբեր սադրանքներ է հրահրում՝ մարզի հայ բնակչությանը ռուսական իշխանությունների մոտ վարկաբեկելու, նրանց որպես անվստահելի տարր ներկայացնելու համար: Նամակագիրը ցավով է փաստում, որ շատ դեպքերում նահանգային իշխանությունները, կուրորեն հավատալով այդ սադրանքներին, հայտնվում են թուրքական խորամանկ սարդոստայնում և դիմում հակահայկական քայլերի (1903, թիվ 5):

Ռուսական ինքնակալության վարած հակազգային քաղաքականության կիզակետը 1905-1906 թթ. Անդրկովկասի տարբեր վայրերում տեղի ունեցած հայ-թաթարական (ադրբեջանական) կռիվներն էին: «Հայերը և թաթարները» հոդվածում Վարազդատը այս հարցի մասին գրում է, որ 1904 թ. հայատյաց իշխան Նակաշիձեն եռանդուն քայլեր է ձեռնարկում հայ ժողովրդին ներկայացնելու որպես ցարի դավադիրների: Նա պատահական չի համարում 1904 թ. վերջին Նակաշիձեի մեկնումը Ս. Պետերբուրգ: «Կը կարծուի թէ, հոն խորհրդակցած է արիւնհեղութեան միջոցներու մասին»,– գրում է Վարազդատը: Հայության կոտորածի իրագործումը դրվեց, թաթարների վրա, որոնք «ուրախութեամբ ստանձնեցին այդ պաշտոնը», նշվում է հոդվածում: Ազգամիջյան կոտորածները դադարեցնելու համար Կովկասի ռուսական իշխանությունների անգործությունը ի ցույց դնելով, Վարազդատը փաստում է. «Կառավարութեան մեղսակցութիւնը ապացուցելու համար աւելի փաստ չի կարելի պահանջել» (1903, թիվ 34):

Իր էջերում «Երիտասարդ Հայաստանը» դիմում է համայն հայությանը՝

օրհասական այդ շրջանում անհապաղ օգնության ձեռք մեկնելու կովկասահայությանը, որը գոյության կռիվ է մղում մոլեռանդ և արյունարբու թուրքթաթարական խաժամուժի դեմ: Հայ ժողովրդին ուղղված «Կոչում» նշվում է. «Յիշէ՛, որ Կովկասահայը անմիջական օգնութեան կսպասի» (1906, թիվ 36):

«Արեւլեան խնդրի շուրջը» հոդվածում բարձրացվում է այն կարևոր հարցը, որ Օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ գտնվող բալկանյան ժողովուրդների ազատագրության ճանապարհին լուրջ խոչընդոտ են նեղ ազգային հակասությունները, որոնք շատ դեպքերում վերածվել են փոխադարձ թշնամության: «Այս խառնարանի մէջ աւելի ազգային, ցեղային շահերի հակամարտութիւն կայ քան մի ընդհանուր ներդաշնակութիւն... տիրապետող լուծի դէմ միահամուռ ոյժով պայքարելու: Յոյնը մարտնչում է բուլղարի դեմ, բուլղարը՝ սերբի եւ այսպիսի անհաշտ վերաբերմունք մին դեպի միւսը»,– գրում է Սապահ-Գյուլյանը (1903, թիվ 3): Նա ցույց է տալիս, որ այդ դրությունից երկար ժամանակ օգտվում էր թուրքը և կարողանում մեկը մյուսի դեմ հանել և այդ կերպ «իր տիրապետութիւնը յարատեւել» (նույն տեղում): Հոդվածի եզրահանգումը հետևյալն է՝ քանի դեռ քրիստոնյա այդ ժողովուրդները իրենց ազգային գլխավոր խնդրի շուրջ չեն համախմբվել, ապա չեն կարող սպասել նաև մոտալուտ ազատությանը:

Հեղինակն անդրադառնում է նաև բալկանյան ժողովուրդների ազատագրության խնդրում Ռուսաստանի դերի հարցին: Կենտրոնանալով մակեդոնական հարցի վրա՝ նա գտնում է, որ վաղ թե ուշ Ռուսաստանը «մակեդոնական խնդրի մէջ» ռազմական միջամտության է դիմելու: Դրա հետ մեկտեղ, նրա համոզմամբ, իրականում «Ռուսիան չի նպաստում ազգերին ազատուելու՝ ազատութեան համար, այլ որ ազատուելուց յետոյ՝ իր որսը դառնան» (նույն տեղում): Հոդվածի հեղինակի եզրակացությամբ՝ «սա է ռուսական մթին ինտրիգների ուղղութիւնը» (նույն տեղում):

«Մակեդոնիա և Հայաստան» հոդվածում արծարծվում է Օսմանյան կայսրության՝ որպես պետության գոյություն հարցի սերտ առնչությունը մակեդոնական և հայկական հարցերի հետ: «Թիւրքիայի գոյութեան արմատները, իբրև անկախ պետութիւն գտնվում են Հայաստանում, քանի կայ Հայաստան՝ թուրքը կարող է իր տիրապետութիւնը պահել, առանց Հայաստանի Թուրքիան գոյութիւն ունենալ չի կարող, այնպէս որ նրա վերջնական անկման կամ պահպանութեան խնդիրը հայկական բարձունքների մէջ պիտի որոնել» (1903, թիվ 17): Ինչ վերաբերում է Մակեդոնիային, ապա ըստ Սապահ-Գյուլյանի՝ Թուրքիան կարող է առանց նրա գոյատևել, սակայն այդ երկրի հետ կապված է մեկ այլ կարևոր հարց, այն է՝ «թուրքի գոյութիւնը Եւրոպայում կամ նրա արտաքսուիլը» (նույն տեղում):

Սապահ-Գյուլյանը գրում է, որ պատմաբանները, հրապարակախոսները սովոր են որակել թուրքին իբրև «մի աւազակ Եւրոպայի մէջ բանակող, բայց հակառակ զանազան ժամանակներ արձակած աղաղակներին և տեղի ունեցած պատերազմներին, այնումենայնիվ այդ աւազակը կարողացաւ ապ-

րել այնտեղ մինչև այսօր» (1903, թիվ 17): Հոդվածում ցույց է տրվում, որ Մակեդոնիայի անկախության կամ ինքնավարության ձեռքբերումը վճռական ազդեցություն է ունենալու Եվրոպայից Թուրքիայի արտաքսման գործում: Սապահ-Գյուլյանը գտնում է, որ թեպետ Օսմանյան կայսրությունը օգտագործելու է եվրոպական պետությունների միջև եղած հակասությունները՝ թույլ չտալու համար իր եվրոպական տիրույթների կորուստը, սակայն դա խնդրի վերջնական լուծում չէ նրա համար: «Թուրք պետական անձերը... դեռ շատ վաղուց կանխատեսել են, որ մի օր իրենք անպատճառ Եւրոպայից պիտի արտաքսուին»,– գրում է նա (նույն տեղում):

Թե ինչ է լինելու դրանից հետո, կարո՞ղ են իրենք պահել իրենց գոյությունը որպես ինքնուրույն պետություն, թե՞ պիտի իջնեն պատմության թատերաբեմից, այս հարցի պատասխանը, ըստ հոդվածագրի, թուրքերը տվել են դեռևս XIX դ. 40-ական թթ.: Այն է՝ Եվրոպայից արտաքսվելուց հետո իրենք կարող են ունենալ բավական ընդարձակ և ուժեղ պետություն, «եթե միայն Հայաստանը իրենց ձեռքին մնար» (նույն տեղում): Այս «եթե»-ն բացառելու համար նշված ժամանակաշրջանում թուրք ազգայնականները «ուրվագծել են աւելի կամ նուազ չափով, կիրառութեան մէջ էն դրել օսմանեան ներքին քաղաքականութեան առանցքը կազմող» հետևյալ ուղղությունը.

ա) «Ջանալ ամփոփուել Փոքր Ասիայում և Հայաստանում՝ նպատակ ունենալով այդ երկրներում յառաջ բերել միասեռ տարր, եւ դրա համար էլ չբավականանալ միայն մահմեդական կրօնի տուած կապերով, այլ ամէն աշխատանք ի գործ դնել Օսմանցիացնել քուրդ արաբ, չերքեզ, լազ... տարրերին՝ ոչնչացնելով նրանց ինքնուրույնութիւն եւ անհատականութիւն տուող սիւները եւ դրա փոխարէն Օսմանականութեան գաղափարներով ու զգացումներով տոգորել նրանց բոլորին» (նույն տեղում):

բ) «Ի նկատի առնելով այն իրողութիւնը, որ Հայը ազգութիւն է, այս բառի բուն նշանակութեամբ, և անկարելի պիտի լինէր նրան ձուլել օսմանականութեան մէջ, ուստի այդ վտանգաւոր տարրից ընդմիշտ ազատուելու համար կա՛մ նրան պետք է ստիպել մահմեդականութեան գիրկը մտնելու, կա՛մ ջնջել ինչ միջոցով էլ որ լինի, որպեսզի... Հայաստանը առանց հայի թուրք երկիր լիներ՝ բնակած թուրք և օսմանցիացած տարրերով: Ահա քաղաքական այն գիծը, որ նախագծուել էր... թուրք պետական անձերի կողմից դեռ շատ ժամանակներ առաջ, եւ այդ քաղաքականութեան գործադրութեան համար էր, որ ազդու կերպով ձեռք առնուցեաւ հայերի մահմեդականացման գործը» (նույն տեղում):

Այսպիսով, հայ ժողովրդի ոչնչացումը եղել է «թուրք ազգայականների բարձրակոչ աղաղակը Ռէշիդ Փաշայի օրէն սկսած միչև Միդհատ Փաշան եւ մեր օրերը» (նույն տեղում),– գրում է Սապահ-Գյուլյանը:

Հայկական հարցի լուծման, հայ ժողովրդի ճակատագրի վերաբերյալ Սապահ-Գյուլյանի բավական իրատեսական մոտեցումները ծավալվում են «Մակեդոնիա եւ Հայաստան» հոդվածի երրորդ մասում: Ըստ նրա՝ մակեդո-

նական ապստամբության բոցավառումը պատերազմի մեջ է ներքաշելու նաև Բուլղարիային…, որից հետո եվրոպական պատերազմի բռնկումը շատ հնարավոր է համարվում: Ահա այս պայմաններում նա հայերի դրությունը «մխիթարիչ» չի համարում, քանի որ «այս վերջի պարագային թուրքը պիտի ջանայ օգտուիլ ընդհանուր խառնաշփոթութիւններից, և եթե ոչ բացահայտ կերպով, գեթ ձեռքի տակից կաշխատի մեր վրայ հանել քրդերը, չեքեզները... իր խուժանական զորքը, որպէսզի թէ հայկական վտանգից ազատուի եւ թէ իր պարտութեան, կամ Մակեդոնիայից ձեռնթափութեան պարագային կարողանայ մասամբ իրագործել իր վաղուց փայփայած երազը: Թրքական ամբողջ պատմութիւնը վկայում է, որ նա այդպիսի ոճրագործութիւնների ընդունակ և գործադրող է» (1903, թիվ 18):

Այս մռայլ կանխատեսումների մեջ Սապահ-Գյուլյանը թերահավատ է Ռուսաստանի հանդեպ, որին անվանում է «Բիւզանդիայի Դրօշի հետ նրա նենգութիւնը ժառանգող դաւադիր բռնապետութիւն» (նույն տեղում): Վերլուծելով միջազգային քաղաքական գործընթացները՝ հեղինակը գտնում է, որ «Հայկական վեց գլխաւոր նահանգների մէջ ապրող հայ ժողովրդի գոյութիւնը յարատեւելը կամ բնաջնջուելը» երկար տարիների գործ չէ, և հարցը լուծվելու է շատ սահմանափակ ժամանակաշրջանում: Սապահ-Գյուլյանը համոզված է, որ հայ ժողովուրդը այլևս սպասելու ժամանակ չունի: Ըստ նրա՝ իր ժամանակի սերունդը «կա՛մ ականատես պիտի լինի հայ ազգի դամբարանին՝ օսմանցու ձեռքով, կա՛մ նրա վերջնական յոյսի խորտակմանը՝ Մոսկովեան մտրակի գերին դառնալով» (նույն տեղում): Ցավոք, հետագա իրադարձությունները ցույց տվեցին այս մռայլ կանխատեսման ճշմարտացիությունը: Ըստ Սապահ-Գյուլյանի՝ հայ ժողովուրդն անհետաձգելի պարտականություն ունի «երկրի մէջ մեր կռուող ոյժը ստուարացնելու և պատրաստ վիճակի մէջ դնելու» (նույն տեղում): Սակայն միայն դա բավարար չէ, քանի որ «նիւթապէս խեղճ, զէնքի անվարժ, ցիր ու ցան, իրարից հարիւրաւոր մղոն հեռու, առանց որոշեալ նախագծուած կազմակերպութեան» այդ ուժը միայն կորովի հաշվին ի վիճակի չի լինելու արդարացնել իր վրա դրված հույսը, առավել ևս, որ հենց այդ պարագաներում մեր «թշնամին անհուն առաւելութիւններ ունի մեր վրան», հետևաբար այս հանգամանքներում մեծ դեր է ունենալու «դրսից մտնող, զէնքի վարժ յեղափոխական տարրը» (նույն տեղում): Հոդվածն ավարտվում է հայ երիտասարդությանը ուղղված կոչով՝ «քանի դեռ ուշ չէ» Հայաստան գնալ և հայրենիքին տալ իրենց բազկի ուժը՝ «այդ է պատմութեան հրամայական պահանջը» (նույն տեղում):

«Երեկուայ դասը» առաջնորդող հոդվածում Սապահ-Գյուլյանը գտնում է, որ հայ ժողովրդի ազատագրության համար ազդակ է լինելու արտաքին միջամտությունը, երբ Օսմանյան կայսրությունը կներքաշվի պատերազմի մեջ որևէ եվրոպական երկրի կամ երկրների դեմ: Նա իրավացիորեն գտնում է, որ ցույցերով և առանձին զինված ելույթներով Հայկական հարցը չի կարող լուծվել: Էական ազդեցություն չի կարող ունենալ նաև տարբեր քաղաք-

ներում կառավարական շենքերի կամ նույնիսկ եվրոպական երկրներին պատկանող տարաբնույթ հաստատությունների գրավումը, քանի որ դրանք չեն կարողանալու խախտել «քաղաքական հաւասարակշռութիւնը» (1905, թիվ 24)։ Ըստ նրա՝ հաջողության հասնելու համար անհրաժեշտ է ստեղծել «յեղափոխական լուրջ կազմակերպութիւն», որն առավելագույն չափով կընդգրկի ժողովրդական զանգվածներին։ Այս ամենից հետո հաշվի առնելով երկրի աշխարհագրական դիրքը, հայ ժողովրդի ցրված լինելը, Օսմանյան պետության ուժը ու եվրոպական պետությունների քաղաքականությունը Արևելյան հարցում՝ «ոչ մի ընդհանուր շարժում չկատարել մինչև որ թուրքը կռվի բռնուի եւրոպական մէկ կամ մի քանի պետութեանց հետ», և այդ ժամանակ պետք է համաժողովրդական ապստամբություն սկսել։ Սրանք են, ըստ Սապահ-Գյուլյանի, «Տաճկահայ դատի բարեյաջող լուծման գլխաւոր պայմանները» (նույն տեղում)։

Խոսելով Հայկական հարցի մասին՝ Վարազդատը գրում է. «Մինչև հիմայ մեջտեղ բերուած օրինակներէն կ՚ուզուի ուրեմն, որ հայկական դատի անլուծելի մնալուն գլխաւոր պատճառը պետք է փնտռել մեր անպատրաստութեան մէջ եւ ապա Անգլիոյ թուլութեան ու Ռուսիոյ եւ Գերմանիոյ հակառակութեանց մէջ» (1905, թիվ 29)։ Այնուհետև բերելով Զեյթունի օրինակը՝ նա ցույց է տալիս, որ «ոյժի առաջ միայն կարելի է խոնարհեցնել սուլթանը և յառաջ բերել եւրոպական միջամտութիւն» (նույն տեղում)։

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի խնդիրների շարքում «Երիտասարդ Հայաստանը» առանձնակի ուշադրություն է դարձնում այդ պայքարի ղեկավարությունը ստանձնած քաղաքական կազմակերպությունների դերին, որն արծարծվում է Սապահ-Գյուլյանի «Կուսակցական խնդիրներ» հոդվածաշարում։ Նա գտնում է, որ կուսակցությունները պետք է անպայման առաջնորդվեն որոշակի ծրագրով, որտեղ պետք է բացատրվեն նրանց ղեկավար սկզբունքները, առաջադրած նպատակները և իրականացման միջոցները։ Նա իրավացիորեն նշում է, որ ծրագրային պահանջները բխում են կյանքից, և քանի որ այն շարունակաբար փոխվում է, հետևաբար կուսակցության ծրագրերը ևս պետք է դառնան «այդ յարափոփոխ կեանքի արտայայտիչը և չպետք է դատապարտուեն անշարժութեան» (1905, թիվ 21)։ Երբ ծրագիրը չի համապատասխանում կյանքի անհրաժեշտ պահանջներին, ապա կորցնում է իր հրատապությունը և գործնական նշանակությունը, ուստի դրանից ելնելով՝ Սապահ-Գյուլյանը գտնում է, որ կուսակցության ծրագիրը մշտապես պետք է ենթարկվի «բազմակողմանի քննութեան ու անհրաժեշտ փոփոխութեան» (նույն տեղում)։ Անդրադառնալով որևէ կուսակցության գաղափարական ու քաղաքական սկզբունքները դավանող անհատներին և իրենց կուսակցության հետ նրանց ունեցած փոխհարաբերության հարցին՝ նա սխալ է համարում այն մտայնությանը, թե կուսակցությունը պետք է լինի «բացառապես ղեկավարող մարմին և ղեկավարուող հետևորդներ», որտեղ բոլորը նույն համոզմունքի կրողները պետք է լինեն, և միայն

իբր այս դեպքում կարելի է ասել, թե տվյալ կուսակցությունում «տիրում է ներդաշնակութիւն» (1905, թիվ 20): Խնդրի լուծման համար հեղինակը քննության է ենթարկում Եվրոպայի սոցիալիստական կուսակցություններում տիրող իրավիճակը: Իր դատողությունների հիմնավորման համար նա բերում է նշանավոր սոցիալիստ-տեսաբան Կ. Կաուցկու այն միտքը, ըստ որի՝ այդպիսի տարբերությունները ոչ միայն անխուսափելի են, այլև անհրաժեշտ, քանի որ կուսակցությունների ներսում «մտաւոր կեանքը չպիտի ընդարմանայ» (նույն տեղում):

Ամփոփելով իր միտքը՝ Սապահ-Գյուլյանը գրում է, որ ժամանակակից սոցիալիստական կուսակցութունների կարևոր խնդիրներից մեկն այն է, որ կարողանան ճիշտ հավասարակշռել անհատի ազատությունը և կուսակցական միությունը, որով պայմանավորված է կուսակցության հաջող գործունեության գրավականը:

«Կուսակցական թերութիւններ» հոդվածում Սապահ-Գյուլյանը դատապարտում է հայ ազգային կուսակցությունների շարքում տեղ գտած անհանդուրժողականությունը, կույր ատելությունն ու կուսակցական նեղմտությունը, «հակառակորդ» հռչակված կուսակցությանը ամեն կերպ հարվածելը, նրա յուրաքանչյուր ձեռնարկը «դաւադրական և վնասակար» համարելը: Սրանք նա որակում է «նեղկուսակցականի, աղանդաւորի հոգեկան պահանջներ», որոնք գործունեության նպատակ դարձնելով՝ կուսակցությունները շեղվում են իրենց գլխավոր առաքելութունից, վարկաբեկում ու մեծ վնաս պատճառում համընդհանուր ազգային գործին (1903, թիվ 1):

Այս ճիշտ մոտեցումներով հանդերձ՝ հարկ է նշել այն կարևոր հանգամանքը, որ «Երիտասարդ Հայաստանը» և մասնավորապես Սապահ-Գյուլյանը չեն կարողացել ձերբազատվել իրենց իսկ մատնանշած թերություններից: Պարբերականի բազմաթիվ հոդվածներում ուժեղ քննադատության են ենթարկվում այլ կուսակցությունները, հատկապես վերակազմյալ հնչակյաններն ու դաշնակցականները: Սակայն այդ քննադատությունները շատ դեպքերում սուբյեկտիվ բնույթ են կրում: Նկատելի է դրանց միտումնավորությունը և բարձրացված խնդիրների նկատմամբ նեղկուսակցական մոտեցումը (1903, թիվ 3, 5, 10, 12, 28, 1907, թիվ 3, 18 և այլն):

Ազատագրական պայքարում հայ ազգային կուսակցությունների հաջողության կարևոր պայմաններից մեկը կուսակցական գաղտնապահությունն է: «Երիտասարդ Հայաստանի» էջերից այդ մասին բարձրաձայնում է Վան-Վասպուրականի հայտնի հնչակյան գործիչ Ասոն (1907, թիվ 22):

Ազգային կուսակցությունների գործունեության ուղիների վերաբերյալ բավական իրատեսական դատողությունների շարքում Սապահ-Գյուլյանը, սակայն, միակողմանի և սխալ եզրակացության է հանգում՝ նշելով, որ հայ ազգային կուսակցությունները ձևավորվել են դասակարգային պայքարի գաղափարի շուրջ: Իրականում արմենականներն ու դաշնակցությունը ձևավորվել են ոչ դասակարգային պայքարի գաղափարախոսության շուրջ: Իսկ

ինչ վերաբերում է հնչակյաններին, ապա հայ իրականության մեջ լինելով առաջին սոցիալիստական կուսակցությանը, այնուամենայնիվ չենք կարող պնդել, թե այն ձևավորվել է միմիայն այդ գաղափարախոսության հիման վրա, քանի որ կուսակցության մոտակա ծրագիրը նախատեսում էր հայ ժողովրդի ազատագրումը թուրքական տիրապետությունից, այն է՝ հայ ազգային բոլոր կուսակցությունները ձևավորվել էին ոչ թե դասակարգային պայքարի, այլ ազգային ազատագրության խնդրի շուրջ (1907, թիվ 4):

«Երիտասարդ Հայաստանը» առանձնահատուկ նշանակություն է տալիս ազատագրական պայքարում առաջնորդի դերակատարությանը: «Սրանց պատասխանատուութիւնը մեծ է նրանով, որ իրենց ձեռքին ունեն ամբողջ մի ժողովրդի ճակատագիրը»,– գրում է Սապահ-Գյուլյանը (1903, թիվ 29): Նա վտանգավոր է համարում առաջնորդ կոչված այն գործիչներին, որոնք աշխատում են «անսխալականի կերպարանք առնել եւ միջոց չտալ, որ ինքը քննութեան ենթարկուի» (նույն տեղում): Նա գտնում է, որ ազատագրական շարժման առաջնորդների գործունեությունը «ամէն օր վերլուծութեան պիտի ենթարկուի…, որովհետեւ ինքը միայն չէ, որ հետեւանքը կրում է, այլ մի ամբողջ ժողովուրդ... իսկ եթէ երևեցաւ…, որ նա սխալւում է…, և իր կոչման բարձրութեան վրան չէ.– այն ժամանակ ժողովուրդը միջոց կունենայ նրան դուրս շպրտելու եւ նորերերը հրապարակ բերելու» (նույն տեղում):

«Երիտասարդ Հայաստանը» անդրադառնում է նաև այնպիսի մի հարցի, ինչպիսին ահաբեկչությունն է: «Տեռորի դերը» խմբագրականում ցույց է տրվում, որ թեպետ մատնիչներ ու դավաճաններ յուրաքանչյուր ժողովրդի մեջ կան, սակայն պետականազուրկ ժողովուրդների մոտ դրանց թիվն ավելի մեծ է: Հեղինակը դա պայմանավորում է այն հանգամանքով, որ երկար ժամանակ օտարի լծի տակ գտնվելով՝ հպատակ ժողովուրդների մոտ մեծանում են ստրկամտությունը, վախը և մարդկային այլ արատավոր գծերը, որոնք դառնում են մատնիչության և դավաճանության համար պարարատ հող: Հոդվածագիր Սապահ-Գյուլյանը ցույց է տալիս, որ «նուաճողները ոչ միայն խրախուսած, վարձատրած են մատնութիւնը, դավաճանութիւնը», այլև դրանց վրա հենվել են իրենց իշխանության ամրապնդման համար, թեպետ և նույն նվաճողների կողմից «միշտ նկատուել են որպէս արհամարհելի արարածնէր» (1904, թիվ 45): Նա հատկապես վտանգավոր է համարում հոգևորականների մատնությունը, քանի որ վերջիններս «պատնէշուէլ են իրենց սքեմի մէջ» և խոսել «յաւիտենական ճշմարտութիւնների անունով», հետևաբար՝ հասարակ ժողովրդի համար դժվար է եղել ճանաչել նրանց իսկական էությունը: Ահաբեկչության գործադրումը համարվում է «հայ յեղափոխական շարժման» բաղկացուցիչ մասը (նույն տեղում):

1906 թ. մայիսին հնչակյան նշանավոր գործիչ Մուրատը (Համբարձում Պոյաճյանը), որը Սասունի ապստամբությունից հետո ձերբակալվել էր իշխանությունների կողմից և աքսորվել աֆրիկյան Տրիպոլի, կարողանում է փախչել և հասնել Փարիզ: Այստեղ նա շրջաբերականով դիմում է հնչակյան

կուսակցության մասնաճյուղերին՝ հայ ժողովրդի փրկության համար մեծ հույսեր չկապել Եվրոպայի հետ և գործնական քայլեր կատարել ազգային մյուս կուսակցությունների հետ միասնական ճակատ կազմելու ուղղությամբ: «Լավ է ուշ քան երբեք» խմբագրականում Մուրատը կոչ է անում հայ ազգային կուսակցությունների ղեկավար մարմիններին միջոցներ ձեռնարկել «Հայ հեղափոխական կոնգրես» կազմելու ուղղությամբ[1]: Մինչ Մուրատի կոչը՝ դեռևս 1900 թ. այդ գաղափարն առաջ էր քաշել Սապահ-Գյուլյանը: «Հայ հեղափոխական կոնգրեսը» հոդվածում նա կարևորել էր հայ քաղաքական ուժերի միավորման գաղափարը, առանց որի «մեր անկազմակերպ ու ցրուած ուժերը առաջին հարուածեն իսկ պիտի ջաղջախուին»[2]:

Մուրատի նախաձեռնությունը մեծ աջակցություն է գտնում «Երիտասարդ Հայաստանում»: Շ. Շահումյան անունով հոդվածագիրը վեհաժողովի ստեղծման մեջ հայ ժողովրդի կենսական շահերի տեսանկյունից «անփոխարինելի օգուտներ» է տեսնում և բոլոր քաղաքական կազմակերպություններին կոչում է «ոյժ տալ համերաշխութեան և Յեղափոխական Գօնկրեսի» գումարման գաղափարին (1907, թիվ 15): Մուրատի առաջարկը ջերմորեն ընդունեցին հնչակյանները, վերակազմյալները, սակայն դաշնակցությունը այն մերժեց՝ պատճառաբանելով, որ այն դեռևս վաղաժամ է:

ՀՅԴ-ի չորրորդ ընդհանուր ժողովը իր մերժումը պատճառաբանել էր այն հանգամանքով, որ «Երկրիի մէջ դաշնակցական մարմիններէն զատ Հնչակյան և ուրիշ յեղափոխական մարմիններ գոյութիւն չունին» (1907, թիվ 6):

«Երիտասարդ Հայաստանի» հոդվածագիրները, որոնց թվում և հնչակյան հայտնի գործիչ Վարազդատը, մի շարք հրապարակումներով հերքում են այդ հայտարարությունը՝ գրելով, որ իրականում ՀՅԴ-ն չի ցանկանում համագործակցել ազգային մյուս կուսակցությունների հետ: «Մենք և Դաշնակցականները» խմբագրական հոդվածում Վարազդատը իրավացիորեն նշում է, որ Օսմանյան կայսրության մեջ քիչ չեն հնչակյան կազմակերպությունները, իսկ որոշ շրջաններ կան «բոլորովին հնչակեաններէ շրջապատուած» (նույն տեղում):

«Երիտասարդ Հայաստանի» էջերում քննարկվում է նաև ժողովրդի ինքնապաշտպանության գործի կազմակերպման հարցը: «Պարսկական գործեր» հաղորդման մեջ Սլահ ծածկանունով հոդվածագիրը գրում է. «Զարմանալի ժողովուրդ ենք մենք՝ հայերս, կարծես իսկի օգտուել չգիտենք դարերի փորձից, զենքի մասին մտածում ենք այն ժամանակ՝ երբ արդէն թշնամու սուրը հասել է մեր պարանոցին» (1903, թիվ 15): Նա բերում է օրինակ, երբ Թավրիզի հայերը, թուրքերի հարձակմանը, ավերածություններին ու թալանին ենթարկվելով և շուրջ մեկ շաբաթ պաշարման մեջ գտնվելով, «փափագում էին

---

[1] ՀԱԱ, ֆ. 1456, ց. 1, գ. 118, թ. 3:

[2] «Հնչակ», 1906, թիվ 1:

զէնք ունենալ, բայց երբ վտանգն անցաւ…, այլեւս ոչ ոք չուզեց մտածել անգամ ապագայ վտանգներից ազատուելու միջոցների մասին» (նույն տեղում): Այդպիսի անտարբերությունը հոդվածագիրն իրավացիորեն հանցանք է համարում: Այս հարցում նա մեղադրում է նաև կուսակցություններին, որոնք թեպետ կոչված են կազմակերպելու ժողովրդի ինքնապաշտպանության գործը, սակայն «ամբողջ ժամանակը զբաղուում են կուսակցական վեճերով, կռիւներով» (նույն տեղում): Ցույց է տրվում, որ ազգային կուսակցությունների տեղական կազմակերպությունները պարտավոր են գիտակցելու իրենց պարտականությունը և զբաղվելու ժողովրդի ինքնապաշտպանության գործով (նույն տեղում):

Գաղութահայության դրությունն ու նրա խնդիրները մշտապես գտնվում են պարբերականի ուշադրության կենտրոնում: Նրա էջերում տպագրվում են հայկական տարբեր գաղթօջախների վիճակի, նրանց առջև ծառացած խնդիրների վերաբերյալ հրապարակումներ: Այս շարքում առանձնահատուկ տեղ է հատկացվում Ամերիկայի հայ գաղթօջախին: «Ամերիկայում» հոդվածում Սապահ-Գյուլյանը գրում է, որ իրենց ընտանիքները տառապող հայրենիքում թողած գաղթական հայությունը չպետք է բավարարվի միայն նյութական կարողություն ստեղծելով: Նա պարտավոր է ստանալու «զինուորական կրթութիւն»՝ մի բան, որը հեղինակի բնորոշմամբ ոչ մեծ դրամական զոհողություն է պահանջում և ոչ երկար ժամանակ: Ամերիկան ընձեռում էր այդ հնարավորությունը, և դրանից չօգտվելը Սապահ-Գյուլյանը մեծ բացթողում է համարում: Նա իրավացիորեն գտնում է, որ հայ ժողովուրդը զենքի և ուժի մեծ կարիք ունի, հետևաբար պետք է աշխատել լրացնելու այդ բացը ամեն կերպ, քանի դեռ ուշ չէ: Վերոհիշյալ հանգամանքներն ի նկատի ունենալով՝ հոդվածագիրը եզրակացնում է, որ Ամերիկայի հայ պանդուխտները «տառապող ժողովրդի զաւակ լինելով՝ շարունակ իրենց ղեկավարիչ մտածմունքը պիտի անեն այն՝ թէ Ամերիկան նպատակ չէ այլ միջոց», որի ընձեռած հնարավորություններից օգտվելով՝ պետք է շարունակաբար հզորանալ մայր հայրենիքն ազատագրելու համար (1903, թիվ 19):

Այսպիսով, «Երիտասարդ Հայաստանի» էջերում ամրապնդվում է այն գաղափարը, որ ազատությունից զրկված հայ ժողովուրդը «առանց սուրի եւ արիւնի» երբեք չի կարող հասնել իր բաղձանքին: Ահա այս խնդիրներն էին նշված ժամանակաշրջանում լայնորեն քննարկվում «Երիտասարդ Հայաստանի» էջերում: 1908 թ. տեղի ունեցած երիտթուրքական հեղաշրջումը ստեղծեց քաղաքական նոր իրավիճակ և նոր խնդիրներ առաջադրեց հայ ազգային կուսակցություններին:

Гегам Оганесян – ***Вопросы национально-освободительной борьбы армянского народа в американском периодическом издании «Молодая Армения» (1903-1907)***

В начале XX века главным вопросом армянской национально-политической жизни было освобождение западных армян от Османской империи. Усилия армянских национальных партий были направлены на решение этой проблемы. В создавшихся международно-политических условиях дальнейший ход освободительной борьбы, пути деятельности национальных партий, роль, которую сыграли в этой борьбе различные слои армянского народа, и многие вопросы, связанные с этой проблемой, широко обсуждались в партийной прессе. Эти вопросы были также подняты в журнале Гнчакянской партии Америки «Молодая Армения».

Gegham Hovhannisyan – ***National Liberation Struggle Issues of the Armenian People in the American Periodical "Young Armenia" (1903-1907)***

At the beginning of the 20th century, the main issue of the Armenian national-political life was the liberation of Western Armenians from the Ottoman Empire. The efforts of the Armenian national parties were aimed at solving this problem. In the current international political conditions, the further course of the liberation struggle, the paths of activity of national parties, the role that various layers of the Armenian people played in this struggle, and many issues related to this issue were widely discussed in the party press. These issues were also raised in the magazine "Young Armenia" of the Hunchakyan Party of America.

Ներկայացվել է 05.09.2019
Գրախոսվել է 18.10.2019
Ընդունվել է տպագրության 05.11.2019